

## ԲՈՒԼՂԱՐԻԱ

Առողջապահության և բժշկագիտության բնագավառում համագործակցության համաձայնագիր է ստորագրվել 2003թ. սեպտեմբերի 8-ին, Սոֆիա քաղաքում:

Ստորագրող կողմերն են ՀՀ կառավարությունը և Բուլղարիայի Հանրապետության կառավարությունը:

Համագործակցության շրջանակներն են.

- ուղղակի համագործակցություն պետական սանիտարական հսկողության և վարակիչ հիվանդությունների բնագավառներում համագործակցության զարգացում,
- բժշկական վիճակագրություն
- գիտական և բժշկական կադրերի ուսուցում
- գիտական ուսումնասիրությունների համատեղ իրականացում
- դեղորայքային քաղաքականություն
- իրենց երկրներում կազմակերպվող կոնֆերանսների, համագումարների և նմանատիպ այլ միջոցառումների մասին փոխադարձ տեղեկացում,
- անհետաձգելի վիրաբուժական դեպքերում գործող կարգերի համապատասխան բժշկական օգնություն երկու երկրների քաղաքացիներին՝ հյուրընկալվելիս, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝ բժշկական ապահովագրության շրջանակներում, Բուլղարիայի Հանրապետության քաղաքացիների համար անվճար:
- վճարովի հիմունքներով հիվանդների գործուղումներ ուղեգրերով՝ պլանային բուժօգնության դեպքում,
- առաջարկված թեմաներով փորձագետների պատվիրակությունների աշխատանքային այցելություններ:
- տեղեկատվության փոխադարձ փոխանակում: